

Ներածություն

Սպառողների լայն շրջանակին ուղղված վիճակագրական սույն ժողովածուում փորձ է արված արտացոլել հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսության գործունեությունը բնութագրող ամփոփ տվյալների դիմամիկան և 2001թ. վիճակագրական ցուցանիշների քանակական վերլուծությունը: Իրավիճակի արտացոլման ցուցանիշների ընտրությունը կատարվել է՝ ելնելով միջազգային համադրելիության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև ներքին սպառողների պահանջներից:

Ժողովածուում ներառված են հետևյալ բաժինները. բնակարանային ֆոնդ, բնակապահովվածություն, անշարժ գույքի շուկա, բնակչության և կոմունալ տնտեսության ջրամատակարարում, գազաֆիկացում, ջերմամատակարարում, քաղաքային բնակավայրերի սանմաքրում ու բարեկարգվածություն և այլն: Բաժիններն ավարտվում են հիմնական ցուցանիշների վիճակագրական դիմամիկ շարքերով:

Ժողովածուում ընդգրկվել է նաև տեղեկատվություն հանրապետությունում վնասվածության III և IV աստիճանի (վթարային և խարխուլ) բազմաբնակարան շենքերի և բնակելի տների (առանձնատների) ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված միանվագ հաշվառման արդյունքների մասին:

Այս ժողովածուում առաջին անգամ զետեղվել են նաև այլ գերատեսչությունների, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակարանային և կոմունալ քաղաքականության վարչության և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի լրատվական ծառայության տրամադրած նյութերը՝ ներկայացվող վիճակագրական տեղեկատվության ամբողջականությանն ապահովելու նպատակով:

ՀՀ ԱՎԾ-ն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգված դիտարկումների վարչության պետ պարոն Ա.Խաչատրյանին՝ խորհրդատվական ծառայությունների և առանձին բաժինների խմբագրական աշխատանքների համար:

Հուսով ենք, ժողովածուն կարող է տեղեկատվական բավարար հիմք հանդիսանալ սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակողների և այն իրականացնողների, գիտակրթական գործունեությամբ զբաղվողների և վերլուծաբանների, ինչպես նաև հանրության լայն շրջանների համար:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն